

## Քարոյական վնասի ինստիտուտի ներմուծման անհրաժեշտությունը

1999 թվականի հունվարի 1-ին ուժի մեջ մտավ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքը, որը լուրջ առաջընթաց էր քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման և բնականոն գույքային շրջանառության կարգավորման տեսանկյունից: Օրենսգրքի կիրարկման ուժով առաջ եկան բազմաթիվ նոր իրավահարաբերություններ, նոր ինստիտուտներ, կատարելագործման և լուրջ փոփոխությունների ենթարկվեցին նախկինում գործող քաղաքացիաիրավական ինստիտուտները:

Սակայն նոր Քաղաքացիական օրենսգրքում, անհասկանալի պատճառներով տեղ չգտավ այնպիսի կարևորագույն ինստիտուտ, ինչպիսին է «բարոյական վնասի փոխհատուցումը»:

Դժվար է թերագնահատել նշված ինստիտուտի կարևորությունը՝ քաղաքացու իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Չէ՞ որ քաղաքակիրթ հասարակությունում պետք է պաշտպանված լինեն ոչ միայն նյութական բարիքները, այլ նաև քաղաքացու ներքին հավասարակշռվածությունը՝ հոգեկան կայունությունը և ֆիզիկական բնականոն վիճակը:

Կյանքը, առողջությունը, հոգեբանական բարեկեցությունը՝ ահա թե ինչ հիմքի վրա կարող են իրոք զարգանալ հասարակական և տնտեսական հարաբերությունները: Այս բարիքների պահպանումն է խթանում արդար, մրցունակ շուկայի, և հետևաբար ողջ երկրի զարգացումը:

Աշխարհի բազմաթիվ երկրների փորձն արդեն հաստատել է այս ինստիտուտի կարևորությունը և կենսունակությունը: Հարկ է նշել, որ այս ինստիտուտը առկա է ինչպես անգլո-ամերիկյան իրավական համակարգի, այնպես էլ եվրոպական, մայրցամաքային իրավական համակարգին պատկանող երկրների օրենսդրություններում: Ավելորդ չէ նշել, որ այս ինստիտուտը առկա է ԱՊՀ անդամ պետությունների համար մշակված մոդելային Քաղաքացիական օրենսգրքի նախագծում, ինչը հիմք է հանդիսացել դրա ամրագրման համար ԱՊՀ մի շարք պետությունների, այդ թվում նաև Ռուսաստանի Դաշնության, Քաղաքացիական օրենսգրքերում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության զարգացման ուղղություններից մեկը դա Եվրոպական կառույցներին ինտեգրումն է, ինչպես նաև կարևորելով տնտեսական զարգացման, բարոյահոգեբանական պաշտպանվածության և առողջ մթնոլորտի ստեղծման փաստը, այսօր արդեն իսկ առաջնահերթ է «բարոյական վնասի փոխհատուցման» ինստիտուտի ներմուծումը: Տեղին է նշել նաև, որ այդ ինստիտուտի կիրառման փորձ Հայաստանում կա:

Դեռևս 1997 թվականին, նախկին Քաղաքացիական օրենսգրքում կատարվեցին փոփոխություններ, որոնց արդյունքում «բարոյական վնասի փոխհատուցում» հասկացությունն ընդգրկվեց այդ օրենսգրքում որպես քաղաքացիաիրավական ինստիտուտ: Սակայն այս ինստիտուտի կիրառման պրակտիկան շատ կարճ տևեց:

«Անձի կյանքը և առողջությունը, արժանապատվությունը, անձնական անձեռնամխելիությունը, պատիվն ու բարի անունը, գործարար համբավը, մասնավոր կյանքի անձեռնամխելիությունը, անձնական ու ընտանեկան կյանքի գաղտնիությունը, ազատ տեղաշարժվելու, բնակվելու և գտնվելու վայր ընտրելու իրավունքը, անվան իրավունքը, հեղինակության իրավունքն ու քաղաքացուն ի ծնե կամ օրենքի ուժով պատկանող այլ անձնական ոչ գույքային իրավունքները և ոչ նյութական բարիքներն անօտարելի են ու անփոխանցելի»: Հանրաճանաչ է այս դրույթը, որն ամրագրված է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 162 հոդվածի 1 կետով: Սակայն հարց է առաջանում, ինչպես են պաշտպանվում մեր պետությունում անձի՝ ի ծնե կամ օրենքի ուժով ձեռք բերված այս անօտարելի և անփոխանցելի իրավունքները:

Նույն հոդվածի երկրորդ կետով սահմանվում է. «Ոչ նյութական բարիքները, սույն օրենսգրքին և օրենքներին համապատասխան, պաշտպանվում են դրանցով նախատեսված դեպքերում ու կարգով, ինչպես նաև այն դեպքերում ու այն սահմաններում, որոնցում քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակների օգտագործումը /հոդված 14/ բխում է խախտված ոչ նյութական իրավունքի էությունից և այդ խախտումների հետևանքների բնույթից»:

Քաղաքացիական օրենսգրքի 14 հոդվածը սահմանում է քաղաքացիական իրավունքների պաշտպանության իրականացման եղանակները, որոնցից մեկն է վնասների հատուցումը:

Պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության միջոցները սահմանված են օրենսգրքի 19 հոդվածով, ըստ որի քաղաքացին իրավունք ունի դատարանով պահանջելու հերքելու իր պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող տեղեկությունները, եթե նման տեղեկություններ տարածած անձը չապացուցի, որ դրանք համապատասխանում են իրականությանը, իսկ եթե նման տեղեկությունները հրապարակված են զանգվածային լրատվության միջոցներով, ապա դրանք պետք է հերքվեն զանգվածային լրատվության նույն միջոցներով: Նույն հոդվածի պահանջներից է նաև, երբ նման տեղեկությունները պարունակվում են կազմակերպությունից ելնող փաստաթղթում, ապա նման փաստաթուղթը պետք է փոխարինվի կամ հետ կանչվի: Հոդվածը իրավունք է տալիս քաղաքացուն այդ տեղեկությունները հերքելու հետ միասին՝ պահանջել հատուցելու դրանց տարածմամբ պատճառված վնասները /խախտված իրավունքը վերականգնելու համար անձի կատարած ծախսերը, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը, ինչպես նաև չստացված եկամուտները/:

Վերոգրյալ վերլուծությունից պարզ է, որ քաղաքացու ոչ նյութական բարիքների իրավունքի խախտման դեպքում իրավունք է տրվում նրան պահանջելու նյութական վնասների հատուցում: Սակայն ակնհայտ է այն փաստը, որ խախտվելով քաղաքացու ոչ նյութական բարիքների իրավունքը, վնասը /հոգեկան կամ ֆիզիկական/ շատ ավելին է լինում:

Քաղաքացու աշխատունակության կորստի աստիճանը, այդ թվում բաց թողնված մասնագիտական հնարավորությունները, բնակության վայրի, ապրելակերպի, մասնագիտության հարկադրական փոփոխությունը, կորուստները կապված երեխա չունենալու կամ ծննդաբերության ռիսկի հետ, և այլ շատ կարևոր հանգամանքներ, որոնց առկայության դեպքում հոգեկան /բարոյական/ վնասները շատ

ավելին են, քան կարող են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով բավարարվել:

Կարծում եմ այսօր անհերքելի է անհրաժեշտությունը որպես քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակ՝ բարոյական վնասի փոխհատուցումը սահմանելը: Բարոյական վնասը՝ դա քաղաքացուն ի ծնե կամ օրենքի ուժով պատկանող ոչ նյութական բարիքների /կյանքը, առողջությունը, արժանապատվությունը, գործարար համբավը, մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը, անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը և այլն/ ոտնահարման կամ նրա ոչ գույքային իրավունքները /անվան օգտագործման իրավունքը, հեղինակության իրավունքը և այլն/, կամ քաղաքացու գույքային իրավունքները խախտող գործողություններով /անգործությամբ/ պատճառված բարոյական կամ ֆիզիկական տառապանքն է: Բարոյական վնասի փոխհատուցումը կատարվում է անկախ հատուցման ենթակա գույքային վնասից կամ դրա հատուցումից:

Օրենքը պետք է սահմանի բարոյական վնասի փոխհատուցման հիմքերը, մեղքի առկայությունը և դրա ազդեցությունը վնասի հատուցման աստիճանի վրա, բարոյական փոխհատուցման ձևը, ինչպես նաև սահմանում է չափանիշներ որոնք պետք է հաշվի առնվեն դատարանի կողմից բարոյական վնասի չափը որոշելիս:

Նման չափանիշներ կարող են լինել՝

1/ խախտողի մեղքի աստիճանը.

2/ անձի, որին պատճառվել է բարոյական վնասը, անհատական առանձնահատկությունների հետ կապված՝ ֆիզիկական և բարոյական տառապանքների աստիճանը.

3/ խելամտության և արդարության պահանջները.

4/ ֆիզիկական և բարոյական տառապանքների բնույթը, ի նկատի ունենալով փաստացի հանգամանքները, որոնց ժամանակ հասցվել է բարոյական վնասը և մարդու անհատական առանձնահատկությունները.

5/ ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

**Հովհաննես Մանուկյան**

ՀՀ տնտեսական դատարանի նախագահ,  
ԱՊՀ տնտեսական դատարանի պլենումի անդամ